

✓ **Կարևոր է իմանալ**, թե անտառային հրդեհները և դրանց հետևանքները բացառելու համար արգելվում է՝

- կրակ վառել չնախատեսված վայրերում. խիստ անհրաժեշտության դեպքում այն կարելի է անել բաց տարածքներում՝ խարույկը շրջապատելով 5 մետրից ոչ պակաս հանքայնացված շերտով, իսկ վերջում հանգցնել ջրով կամ ծածկել հողով,

- նետել վառվող լուցկի, չմարած ծխախոտի մնացորդ,

- վառելիքով կամ տրանսպորտային միջոցներով լցված տարաների մոտ ծխել և բաց կրակի օգտագործումը,

- այրել չոր խոտը, խոզանը,

- շշերը, ապակու կտորները թողնել բաց տարածքներում, քանի որ դրանք կարող են կենտրոնացնել արևի ճառագայթները և դառնալ հրկիզող ոսպնյակներ:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵԸ

Իմանալով, թե ինչ անել անտառային հրդեհի դեպքում, կարող եք փրկել ձեր կյանքը և ունեցվածքը: Իմացեք, թե ինչպես անտառային հրդեհների ժամանակ պաշտպանել Ձեզ, Ձեր ընտանիքը և ունեցվածքն՝ օգտագործելով անտառային հրդեհների անվտանգության վերաբերյալ այս կարևոր խորհուրդները:



☎ 112 🌐 rescue.mia.gov.am



ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀ

Անտառային հրդեհը բուսականության անվերահսկելի այրումն է, որը տարերայնորեն տարածվում է անտառային տարածքում:

Անտառային հրդեհները լինում են ստորին, վերին (գազաթային) և ստորգետնյա:

Վերին անտառային հրդեհների ժամանակ այրվում են ծառերի պսակները: Տարածվում են ուստյուններով կամ հոծ պատով:

Ստորին անտառային հրդեհների ժամանակ այրվում են վերգետնյա ծածկը, թփերը: Տարածման արագությունը մեկ ժամում մի քանի հարյուր մետրից մինչև 6 կմ է:

Ստորգետնյա անտառային հրդեհների ժամանակ այրվում է 0.3 մ-ից ավելի խորը գտնվող տորֆային շերտը:

ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Անտառային հրդեհները 90%-ով մարդու անփույթ վերաբերմունքի հետևանք են. դրանք լինում են աշխատանքի և հանգստի վայրերում բնակչության կողմից հակահրդեհային անվտանգության միջոցառումները չպահպանելու, ինչպես նաև անտառում աշխատելիս անսարք տեխնիկա օգտագործելու հետևանքով: Անտառային հրդեհներն առաջանում են ամպրոպի ժամանակ ճայթող կայծակից, ինչպես նաև տորֆի ինքնաբռնկումից, մի բան, որ հաճախ է պատահում անտառներում, և օդերևութաբանական ոչ բարենպաստ պայմաններից /օդի բարձր ջերմաստիճան, անձրևների տևական բացակայություն

ԵՔԵ ԴՈՒՔ ԿՐԱԿԻ ՄՈՏ ԵՔ

- Անմիջապես զանգահարե՛ք 112:
- Եթե ձեզ վտանգ չի սպառնում և ունեք համապատասխան հագուստ, փորձե՛ք մարել փոքրիկ բռնկումները բահերով, թիակներով կամ ճյուղերով:
- Խուսափե՛ք ծխի ազդեցությունից, ծածկե՛ք Ձեր բերանը և քիթը խոնավ շորով:
- Պաշտպանե՛ք մարմինը կրակից և ջերմությունից չոր և երկար հագուստով:
- Մի՛ խաթարեք հրշեջների, էկոպարեկների և այլ փրկարար ուժերի գործողությունները և հետևե՛ք նրանց հրահանգներին:
- Հեռացրե՛ք Ձեր մեքենան հրդեհի ուղղություններից:
- Եթե նկատում եք խուճապի մատնված մարդկանց, տեղեկացրե՛ք պաշտոնական մարմիններին:
- Հետևե՛ք պաշտոնական լրահոսին:

ԵՔԵ ՀՐԴԵՀԸ ԱՐԴԵՆ ՁԵՐ ՏԱՆԸ ՄՈՏ Է

- Տեղեկացրե՛ք հարևաններին:
- Փակե՛ք դռները, պատուհանները և այլ բացվածքները՝ շերտավարագույրները կամ փեղկերը:
- Հեռացրե՛ք տան մոտ գտնվող կահույքը կամ վառելիքայտը:
- Եթե դա անվնաս է, անջատե՛ք գազի բալոնները և տեղափոխե՛ք ապահով վայր:
- Պատուհաններից հեռու՛ պահեք այն ամենը, ինչը կարող է այրվել և թաց սրբիչներ փակե՛ք ճեղքերը:
- Եթե ձեզ վտանգ չի սպառնում, մարե՛ք փոքր բռնկումները ջրով, հողով կամ կանաչ ճյուղերով:
- Հետևե՛ք պաշտոնական մարմինների հրահանգներին:



ԵՔԵ ՁԵԶ ԱՆՀՐԱԹԵՇՏ Է ՏԱՐՀԱՆԵԼ

- Եթե պաշտոնական մարմինները հորդորում են ապա անհապաղ տարհանվե՛ք:
- Մի՛ սպասեք տարհանման պաշտոնական հրամաններին, եթե Ձեզ անապահով եք զգում:
- Վերցրե՛ք Ձեր առաջնային անհրաժեշտության իրերը և կարևոր փաստաթղթերը:
- Տեղեկացրե՛ք Ձեր ընտանիքին կամ ընկերներին Ձեր տարհանման ծրագրի և Ձեր գտնվելու վայրի մասին:

ԵՔԵ ԴՈՒՔ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԵՔ ԿՐԱԿՈՎ

- Փնտրե՛ք նախընտրելի հարթ տարածք ջրով կամ քիչ բուսականությամբ:
- Եղե՛ք հատակին հնարավորինս մոտ, շնչե՛ք քթին պահելով թաց կտոր, որպեսզի խուսափեք ծուխը ներշնչելուց:
- Ծածկե՛ք Ձեր գլուխը և մարմնի մնացած մասերը:
- Օգտագործե՛ք խոնավ շոր՝ Ձեր դեմքը ջերմությունից և ծխից պաշտպանելու համար:
- Տեղեկացրե՛ք Ձեր իրավիճակի մասին պաշտոնական մարմիններին՝ 911 հեռախոսահամարի միջոցով:

